սարդ թիւրքա՝ կուսակցութիւնը: Նրա խօսքով, թիւրքաց կարգերից զգոհ մահմադարանները օրինակ էին առնում զժգոհ հայերից և մօտիկ ապագայում, չառ կարելի է, ճիշդ նոյնպէս կը վարվեն, որպէս վարվում են այժմ հայերը, բայց դեռ բացայայտ կերպով չեն միանում նրանց հետ: Ոչ ոքի համար զաղանիք չէր, ինչպէս հաւատացնում է պրոֆեսոր Միսա Չերալ, որ բարեկամական յարաբերութիւններ կային հայկական չարժանի պարագլուխների և իբրանց համակրող «երիտաւոր» թիւրքա՝ կուսակցութեան ղեկավարների մէջ: Ապա նա հաղորդում է իր լրագրում Այր քաղաքից իր ստացած մի նամակի բովանդակութիւնը, որով հաղորդում է, թէ այնտեղի բանտից փախել է թիւրքաց նախկին փոխ-գնդապետ Ռեզիլի-բէյ, զինուորական միլիտարի մօտիկ ազգականը, որը անցել էր «երիտաւոր» թիւրքա՝ կուսակցութեան կողմը: Ռեզիլի-բէյ պարտական է իր ազատութեամբ թիւրք-սիրական կամեմտին: Նրա հետ միասին բանտից փախաւ հայ ազգաւոր Պետրոս Տոնապետեան: Երկուսն ևս դիտաւորութիւն ունեն օգուտ քաղել Անգլիայի հիւրասիրութիւնից և բնակվել Լոնդոնում: Վերջերս, ինչպէս գրում են Լոնդոնից «Berliner Tageblatt» լրագրին, չառ էր խօսվում այն բանի մասին, թէ երիտաւոր թիւրքերը ձեռք ձեռքի տուած էին գնում հայերի հետ, որ նրանց միացնում էին մի և նոյն նպատակները և խորհուրդները, այն ինչ իրականութիւնը ցույց տուց, որ հայկական և «երիտաւոր» թիւրքա՝ կուսակցութեան չարժանի մէջ իսկապէս խոր անջատող գիծ է անցկացրած: Կատարելաւ միութեան բացակայութիւնը երկու բանակների պարագլուխներին մէջ երևաց, ի միջի այլոց, և նրանից, որ հայկական կամեմտները յաճախ բողոքում էին երիտաւոր թիւրքերի տառաման դէմ, ասելով, որ մինչև այժմ միմիայն հայերի վրա էին դրում գործը: Հայկական չարժանի բարեկամներին, բացատրում է «L'Arménie» լրագրի խմբագիրը, ապացրեց իրանց մահմադարան համախոհների անվճարակաւութիւնը, և հայերի դատին ծառայող մամուլի օրգաններից մի քանիները յաճախ դուռն յանդիմանութիւններ էին առնում երիտաւոր թիւրքերին՝ նրանց անգործունէութեան առիթով: Օսմանեան բանակի վրա յարձակողներից երկուսը՝ հայ յեղափոխականներ Կարօ և Հրաչ, որոնք ներկայումս գտնվում են Ժընևում, բոլորովին հիւստիալից են երիտաւոր թիւրքերի կուսակցութեան վերաբերութեամբ՝ ոչ մի յոյս չունենալով նրանց գործակցութեան վրա հայկական տեսակետից: Երիտաւոր թիւրքերի կուսակցութեան արդարեւ յետ կացան հայերից և նրանց հեռանալու պատճառը պէտք է այն համարել, որ նրանք չեն համակրում այն միջոցներին, որոնցով հայ յեղափոխական մամուլագործները ցանկացել

այնքան ուրախութեամբ ընդունեց այդպիսի մի ընտրութիւն իբրեւ շուտով ստորուշ, որ յայտարարեց, թէ ուրիշ երջանկութիւն այս և հանդերձեալ աշխարհում չունի, բացի սուլթանին հաւատարիմ ծառայելուց:

Այս բոլորից յետոյ ընթերցողը պիտի չը դժուարանայ հասկանալ, թէ Ներքեւի անունով հնարած «կտակ» ֆրանսերէն մի թերթում հրատարակելու աւելի քան ցանկալի կը լինէր թիւրք կառավարութեան, որ Ներքեւի նման մի նշանաւոր պատրիարքի բերանով սուլթանին այն խօսքերը, ինչ որ միշտ կրկնել է ինքը—ոչ թէ կառավարութիւնը չէ ցանկանում մտցնել բարեւորութիւններ հայաբնակ վիլայէթներում, այլ ցանկանալով հանդերձ՝ չէ կարողանում: Նոյն իսկ անցեալ տարեկա վաւերացում և իրադէտ ի զործադրութիւն տուած բարեւորութիւնների ծրագիրը մնաց անկատար, նոյնպիսի անկարողութեան պատճառով:

Ֆրանսերէն թերթի բացատրութեան այսպիսի խօսքերը, «Ամենքը յիշում են այն զրկանքները, որ հայերը կրեցին», «Գժաղաղաբար Բերլինի վեհաժողովի որոշումը հայերի համար մնում է և մինչև այժմ որպէս մեռած տառ», զրկած են որոշ նպատակով:—ցոյց տալու համար, թէ այդ «կտակ» հրատարակվում է թուրք կառավարութեան անհամակիր անձերից, որով և աւելի նշանակութիւն են տառադրու նրա բովանդակած մտքերը:—միաժամանակ աշխարհում:

Արիստակէս արքեպ. Անդրեան

են և մտադիր են եղել հասնել իրանց նպատակներին: Նրանք մեծապես են հայ յեղափոխական կուսակցության ծրագիրը, որովհետև նրանք կասկածում են, որ հայ յեղափոխականները ձեռնարկում են ամեն միջոցներով կործանել թիւրքաց կայսրութիւնը: Նրանք միաձայն պահանջում են ուրիշ կարգեր երկրի մէջ, կամենում են վերջ դնել թիւրքական վարչութեան սարսափելի զեղծումներին, բայց իբրև թիւրքեր և մահափետակներ, չեն ընդունում թիւրքիան բաժանելու և քրիստոնեայ Արեւելքում մահափետակա տիրապետութիւնը կործանելու միտքը: Իսկ այդ նպատակին են ձգտում, նրանց կարծիքով, զբաղաւորակա հայկական շարժման պարագլուխները: Նրեմատարգ-թիւրքերի հայ ազդեցութեանը բնական վերջնական քննարկումը և այն միջոցները, որ վերջինները պայմանաւորվեցին գործադրելու՝ Բ. Գուրը և մուսուլման ամբողջ ահաբեկելու համար: Ժընեվում հաստատված հայ ղեկավարողները պարագլուխներին հետ լծողների «Daily News» լրագրի թղթակցի ունեցած խօսակցութիւնից յայտնվեց, որ դաւադիրներին մէջը, Պապէնզոունի անունով, առաջարկել էր հրդեհել Կ. Պոլսը միաժամանակ երկու կողմերից և նրան մոխրակաղ դարձնելով, կոտորել բոլոր մուսուլմաններին: «Մենք կարող էինք»—ասաց Կարսն «Daily News»-ի թղթակցին—«հիմնովին այրել Ստամբուլը իր խիտ բնակչութեան չիտնութեամբով: Այդ մեղ համար յամենայն դէպս և աւելի հեշտ կը լինէր և յարմար, քան օսմանեան բանկի վրա յարձակում սարքելը. բայց, այնու ամենայնիւ, մենք մերժեցինք Պապէնզոունի առաջարկութիւնը, որը մեզ շատ անգույն թւաց: Այդպիսի մտադրութիւնները մերկայանում, ինչպէս գրում են Լոնդոնից «Berl. Tageblatt» լրագրին, չէր կարող, ի հարկէ, չաղբել երիտասարդ-թիւրքերի վրա, որոնք առաջ համակրում էին հայկական շարժման և առաջ չէր բերել նրանց մէջ ստանութիւն դեպի հայկական յեղափոխական պրօպագանդան, որը, աւելի ևս բարդվելով, կարող է փոխարկվել յայտնի թշնամութեան:

Կ. Պոլսից «Times» լրագրին հեռագրում են, որ սուլթանը, ուստաց ղեկավար Նէլիզովին տուած սնկնդրութեան ժամանակ կատարեալ վստահութիւն յայտնեց, թէ մէկ ամսվայ ընթացքում իր պետութեան մէջ կը վերականգնվի կարգը և հանգստութիւնը: Այն եղանակը, որով այդ նկատողութիւններն արեց, պարզ ցոյց է տալիս, թէ սուլթանը չէ հակակում թիւրքիայի ներկայ ծանր դրութիւնը:

«Daily News» լրագրին ասում է, որ պետութիւնների համաձայնութիւնը անհրաժեշտ է սուլթանի վրա ազդելու համար, բայց դրանից դուրս չէ հետեւում, որ այդ համաձայնութեան մէջ պէտք է մասնակցեն բոլոր պետութիւնները: Լորդ Բոգբերի, երբ իշխանութեան ղեկը ձեռքում ունէր, արեւելեան հարցում գործում էր Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ միասին, և Ելիզբետ-գու միտքերս արտասանած իր ձառի մէջ նա բացատրեց, որ պետութիւնների համաձայնութիւն անելով նա հասկանում է ոչ միայն բոլոր պետութիւնների միաբան գործողութիւնը, այլ և մի քանիսն: «Մենք ենթադրում ենք,—աւելացնում է լրագիրը,—որ հէշը դրան է ձգտում Լորդ Սուրբերի: Յամենայն դէպս, նրա պարտաւորութիւնն է այդ բանը գլուխ բերել, եթէ մինչև անգամ նա ստիպւած լինի փոխել իր ամբողջ քաղաքականութիւնը, որին նա հետեւում էր 1878 թւին»:

«Новое Время» լրագիրը խօսելով այն հարցի մասին, թէ ինչպէս պէտք է պաշտպանել թիւրքիայի բրիտանականներին, ասում է հետեւեալը. «Մենք զանազանութիւն կայ թիւրքիան բաժանելու և քրիստոնի հաւատը զաւանդներին ու տանջողներին մարդասէր պաշտպանութիւն ցոյց տալու մէջ: Եղան այնպիսի բարեբարներ, որոնք առաջարկում էին Ռուսաստանին ղեկավարված ձեռքով կարգ հաստատել թիւրքիայում, մոռանալով սակայն, որ մինչև մեր զօրքը կը հասնի գլխաւոր դաշնակցական կէտերը, մուսուլմանները կարող են կոտորել բոլոր մնացած հայերին և դուրսէ նրանց հետ էլ՝ անգլիական հիւպատոսներին: Ռուսաստանը, այդպիսով, չը կարողանալու հասնել իր մարդասէր նպատակին, ահագին վնաս

ներ կը կրի թէ մարդկանց և թէ փողի կողմից և իր ոյժը ու ձեռքը կը կապի: Այդ պատճառով, մենք զարիս ենք այն եղբայրացիութեան, որ միայն մեծ պետութիւնների միաբան և անկեղծ ազդեցութիւնը թիւրքիայի վրա կարող է թեթեւեղել բրիտանականների վիճակը, և դրա համար անմիջապէս պէտք է կազմակերպել կոնֆերենցիա: Իսկ ղեկավարների կողմից սուլթանին ուղղած առանձնակի, անջատ առաջադրութիւնները մինչև այսօր ոչ մի հետեւեղ չարտադրեցին և չեն էլ արտադրի»:

«Новое Время» միայն մի բան է մոռանում, որ թիւրքերը առանց դադարելու շարունակում են հայերի կոտորածը, և եթէ մի ղեկավարված ձեռք նրան յետ չը պահի այդ մարդասպան գործունէութիւնից, նոյն իսկ ամբողջ Եւրօպայի ներկայացուցիչներին կազմված կոնֆերենցիան անկարող կը լինի որ և է ազդեցութիւն գործել նրա վրա»:

«Daily News» լրագիրը հաղորդում է, որ ուստաց ղեկավար Նէլիզով չաւտով Պետերբուրգ կերթայ՝ հայիւ տալու համար գործերի դուրսութեան մասին:

Խոսակցական ղեկավարը դիմեց բողոքով Բ. Գուրան՝ այն վիրավորական գրութիւնների առիթով, որ թիւրքաց օտոնականութեան միջոցաւրը ուղարկում է Կ. Պոլսի խոսակցական ղեկավարներին:

Կ. Պոլսի բոլոր ղեկավարները դիմեցին Բարձր Դրանը հաւաքական բողոքով՝ մի հային առնադար կերպով մահվան պատժի դատապարտելու դէմ, որի ազատութիւնը խոտաւորված էր բելգիական ղեկավարին:

«Standard» լրագրի խօսքով, մեծ պետութիւնները իրանց մէջ համաձայնութիւն կայացրին պահանջել Բ. Գուրին՝ ոչնչացնել այն դաշնակցի մի մասը, որը կանոնաւորում է Գարդուէլի հարցը: Սուլթանը, ըստ երևոյթի, պատրաստ է զիջումներ անել, եթէ պետութիւնները կերպաւորեն իր անձնական ապահովութիւնը և թիւրքաց կայսրութեան ամբողջութիւնը:

Բրիտանական պարլամենտի անդամ Ջեյմս Բրայս (Bryce) Բերլինի լրագիրներին նամակ ուղարկեց, որի մէջ ցաւ է յայտնում այն բանի մասին, որ դերմանացիները կասկածում են Այնգլիայի գիտաւորութիւնների մաքրութիւնը և շատ քիչ համակրութիւն են յայտնում հայերին:

Լորդ Բոգբերի կոչվածութեամբ մի քաղաքական ձառ արտասանեց, որի մէջ նորից շատ կտրական լեզուով յայտնեց, որ Անգլիայի միակողմանի միջամտութիւնը արեւելեան հարցում կարող է պատերազմ առաջացնել, և խնդրում էր իր ունկնդիրներին չենթարկվել այդպիսի միջամտութեան պաշտպանների համոզիչ խօսքերին: Լորդ Բոգբերի ապացուցանում էր, որ St. James Hall-ի միտինգը գործնական ոչ մի նշանակութիւն չէ կարող ունենալ: Ինչ վերաբերում է պարլամենտի անդամ Կուրնէյի առաջարկութեանը՝ դուրս բերել անգլիական զօրքերը Նիզիպատից և Կիպրոսից, գործել այդ ուղղութեամբ, լորդ Բոգբերիի կարծիքով, կը նշանակէր խախտել մեծ պետութեան աւանդութիւնները:

«Նիզիպատի ապագայի մասին խորհրդածելու ժամանակ,—ասեց վերջը լորդ Բոգբերի,—պէտք է ի նկատի ունենալ ոչ այն թէ պայմանները, որոնց մէջ նա գտնվում է, այլ փոքր-Ասիայի բարբարոս վարչութեան պայմանները: Այդ պատճառով Անգլիան չէ կարող Նիզիպատը մի այդպիսի վարչութեան զոհ դարձնել: Այդ հարցում ևս կատարելապէս համաձայն եմ Լորդ Սուրբերիի հետ, թէ պէտք է վերջին միտինգում նրա անուշը ողջունվում էր ծախսաւորութիւններով, իսկ իմը—սուրբներով: Ամբողջ զանազանութիւնը մեր մէջ այն է, որ Լորդ Սուրբերիի ձեռքում ունի կառավարութեան ղեկը, իսկ ես—ոչ: Ես նորից կրկնում եմ, որ Անգլիայի միակողմանի միջամտութիւնը արեւելեան հարցում եւրօպական պատերազմը կառաջացնի և պատճառ կը դառնայ ոչ միայն հայերի, այլ թիւրքիայում ապրող բոլոր քրիստոնեաների կոտորածի: Այդ կէտում ես միշտ հաստատ կը կանգնեմ, որովհետեւ լաւ

տեղեակ եմ: Մեր հարուստ և քաղաքակրթված երկրի համար պատերազմը ամենամեծ թշուառութիւն կը լինէր և բացի վնասից ուրիշ ոչ մի օգուտ չէր բերի թիւրքաց բրիտանականներին»:

Կ. Պոլսից հեռագրում են, հոկտեմբերի 12-ից, «Կեսպանները ստացան այն երկու ուղերձներ, որի պատճենները, որոնք ներկայացրվել են սուլթանին և որոնց մէջ պատեղի հոգևորականները, վաճառականները և բարձր դատակարգը արտայայտում են իրանց հաւատարմական զգացումները, դատապարտում են տեղի ունեցած չարժույթը և պարտաւորվում են տալ յեղափոխական կոմիտէի անդամների անունները ու ցոյց տալ նրանց զէնքի պահեստի տեղը»:

«Այստեղի ղեկավարների ղեկավարական կցորդները մշակել են այն աշխատութիւնների ընդհանուր ծրագիրը, որ պէտք է կատարէ Կրեւելից ու ժամադրամէրիայի վերակազմութեան յանձնաժողովը»:

Բ. Դրան կազմած ծրագիրը՝ 21/2 միլիոն թիւրքական իրաւ հաւաքելու մասին, նպատակ ունի, ինչպէս ենթադրվում է, ներշնչել եւրօպացիներին այն միտքը, թէ ներքին և արտաքին խառնակութիւնների ժամանակ, բոլոր մահափետակները հնարաւորութեան կուսնեան ոտքի կանգնելու»:

«Daily Messenger» հաղորդում է, որ 150 հայ փախստականներ, կատարելապէս զուրկ ամեն միջոցներից, հօլանդական մի չղեկնաւոր եկան Նիւ-Եորք: Դրանք յետ կուղարկվին Եւրօպա՝ աղքատներին Ամերիկայից վերադարձնելու օրէնքի հիման վրա: «Փրկութեան զօրքը» կամենում էր ապաստան տալ նրանց Նիւ-Ջերսիում, բայց այդ նախագի ազդեցականութիւնը կտրական կերպով հակառակվեց դրան:

«Temps» լրագիրը, խօսելով Ալեն-Ջէմի միտինգի մասին, ասում է, որ թէպէտ դժուար է կասկածել այդպիսի ցոյցերի անկեղծութիւնը, բայց նրանք վտանգ են ներկայացնում Եւրօպայի խաղաղութեան համար և կարող են օգուտ բերել միայն անգլիական ուղարկապետներին (չինգոստներին): «Temps» յիշում է, որ անգլիական պարտադրարի հետեւները բոլորական հարցում Արարում 1878 թ.ի պայմանագրին էր: Մի և նոյնը կարող է պատահել և այժմ, եթէ անգլիական կառավարութիւնը զիջի ազդեցականութիւնը:

Նորբուս «Կուսաց գործակալութեան» հեռագիրը հաղորդեց, թէ Կ. Պոլսում յարձակում գործեցին հայ փախստական Կոլօնիայի վրա: Այն լրագիրները հաղորդած մանրամասնութիւնները այդ առիթով:

Կ. Պոլսում սպրդում է հայ փախստական Աւետիս Կոլօնիան, որը արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնեայ է: Այս օրերս նա հայ յեղափոխական կոմիտէից մի նամակ ստացաւ, որի մէջ նրանից պահանջվում էր 10,000 ՔՔՔ-բանկ մտցնել յօգուտ յեղափոխական պրօպագանդայի: Աւետիսը իսկոյն դիմեց ոստիկանութեանը՝ Հոկտեմբերի 8-ին (20), երեկոյեան 8 ժամին, Աւետիսի բնակարանի դրան զանգակը բախեցին երեք անձանքի անձինքը: Գուրը բացեց այնտեղ գտնվող ոստիկաններից մէկը: Անձանքները իսկոյն և եթ յարձակեցին վերջինների վրա: Յուսահատ կոլուսակից նրանց մէջ: Ոստիկաններից մէկը՝ Նուրէյ Էֆենդի, դաւնակի մի քանի հարուածներ ստացաւ փորում: Երբ նրան բարձրացրին, նրա փորովը դուրս թափվեց: Նրան փրկել անհաւ էր: Միւս ոստիկանը, Մանսէր, որ 12 թիւթի վերքեր ստացաւ, սկսեց մազլցնել անգլիական զեպի վեր, բայց առաջին յարկի մօտ արդէն ուշաթափ եղաւ և պատահանից դուրս ընկաւ տան առջև գտնվող այգին: Սպանելով ոստիկաններին, մարդապաշտները փախան: Ինքն Կոլօնիան, որ այդ ժամանակ գտնվում էր առաջին յարկում իր որդեգրած որդու և նրա վարժուհու հետ միասին, անխառն մնաց: Մի քանի րօպէից յետոյ այդ տեղ եկաւ այլոցիկական օֆիցերը և հրամայեց վիրաւորվածներին փոխադրել հիւանդանոցը, ուր սուլթանը չաւտով ուղարկեց իր պաշտօնականներին:

ԱՐԵՎԷԼԵՆԴԻԻ ԴԱՏԱ

Մայրաքաղաքի լրագիրները այսօր հետաքրքիր մանրամասնութիւններ են հաղորդում Արեւելեան թիւրքի դատի մասին, որին, ինչպէս «Կուսաց գործակալութեան» հեռագիրը հաղորդեց, արտակարգ դատարանը դատապարտեց:

«Սուլթանի պալատում շատ զգուհ էին դատարանի նախագահ Լէրիւ Էֆենդիից, թէ նա չափազանց փափկաւորէր է: Այնտեղ զայրանում են նրա վրա այն բանի համար, որ նա արդարացի բնոյ նորբուս դատի ենթարկված հայերից շատերին: Եւ ահա աշխատեցին թուլացնել նրա ազդեցութիւնը դատարանում՝ զեկուցանող նշանակելով նրա ընկերներից մէկին այն պատրուակով, թէ նա վատ է լսում և շատ ցածր է խօսում: Մի և նոյն ժամանակ Լէրիւ-Էֆենդի կանգնեց սուլթանի պալատը՝ գաղտնի հրահանգներ ստանալու համար: Լէրիւ, սակայն, չը գնաց պալատը, յայտնելով, թէ դատարանը ոչ թէ ուրիշների ցուցմունքներով պէտք է ղեկավարվի, այլ օրէնքներով: Մի և նոյն ժամանակ նա յայտնեց, որ Արեւելեան թիւրքի դատը աւարտվելուց յետոյ, ինքն կը հրաժարվի դատարանի նախագահի պաշտօնից: Լէրիւ-Էֆենդին վերին աստիճանի աղիւս մարդ է: Նա 17 տարի շարունակ սուլթանի բարձրագույն էր և հրաժարեցիկից իր ազատամիտ զաւակարների պատճառով:

Որպէս վկաներ կանգնած էին մէկ թիւրք և չորս հայեր: Արեւելի պաշտպանում էին չորս հայ փախստականներ: Ամբողջ մեղադրանքը հիմնված էր ոստիկանական կոմիտայի Հուանի-բէյի հաշի վրա: Ամենից առաջ Արեւել մեղադրվում էր այն բանի համար, որ նա փողով օգնում էր յեղափոխական կոմիտեին և նպաստում էր նրան՝ մանաւանդ որպէս Գալաթիայի հայոց զորացի նախագահ: Որպէս ապացույց՝ դատարանին ներկայացված էին Արեւի մօտ գտնված զէնքը, հայկական թագի պատկերը, վերոյիշեալ զօրացի տեսչի գրած ոտանաւորը ի պատիւ Արեւի, որի մէջ անուշը Արեւիին հայկական յեղափոխութեան հոգին և հայ ժողովրդի առաջնորդ է առնանում, ապագայ Հայաստանի քարտէզը, յեղափոխական կոմիտեի նամակը, որով պահանջում էին նրանից, որպէս զի նա որդեկալ ժամանակ ընդունի իր մօտ այդ կոմիտեի իրաւորներին, յեղափոխական հայ օրացույցը, և հանգուցեալ պատրիարք Նազարիին (?) նամակը, որով հրաւիրվում էր Արեւել մասնակցել յեղափոխական հարցերի քննութեանը:

Արեւի յայտնեց, որ իր մօտ գտնված զէնքը պատկանում էր իր եղբորը, որ մեռել է 13 տարի առաջ և որը այժմ անպէտք է: Ոտանաւորը իրան նուիրված էր մի ղեպիւր ատիթով, և նա երբեք ոչինչ նշանակութիւն չէ տուել այն չափազանցութիւններին, որոնց դիմում է հեղինակը: Հայաստանի քարտէզը նոյն հեղինակն է կազմել: Այդ նա աւելացրեց. «Այնպէս տարի ես, սուլթանի ցանկութեամբ, այցելեցի հայոց եկեղեցիները Պէրայում և Գուլ-Գալիում՝ համոզելու անտեղ թաղնված հայերին վերադառնալ իրանց աները: Այն ժամանակից ես կատարաւարական պաշտօն չունեմ: Չայրացած իմ հաւատարկիցները յեղափոխական ազդեցութեանից, ես վճռեցի ամեն յարաբերութիւն կտրել նրանց հետ: Ես հրաժարվեցի իմ բոլոր պաշտօններից և կոչումներից, և այդ ժամանակից չէի այցելում ոչ զօրացիները, և ոչ էլ ժողովները»:

Յեղափոխական կոմիտեի նամակի առիթով Արեւի ասեց, «Ես այդ նամակի մասին չը գիտեմ: Նա իմ թղթերում չէ գտնվում: Որովհետեւ ես սրտի հիւանդութիւն ունեմ, յանձնեցի եղբորս իմ հասցէին ուղարկելով բոլոր նամակները ստանալ և չուղարկել ինձ այնպիսիները, որոնք կարող կը լինէին զրգուել ինձ: Եղբայրս գիտէր, որ ես ոչ մի կառ չունեմ այդ անիծեալ հայկական ազդեցութեան հետ և այդ պատճառով չը ցոյց տուեց ինձ այդ նամակը»:

Ապա հարց ու փորձ արին վկաններին: Ոստիկանները հաղորդեցին, թէ կոմիտեի նամակը Արեւի մօտ գտնվեց, և ոչ թէ եղբոր մօտ: Այդ խօսքերի ժամանակ Արեւի տեղից վեր թռչելով՝ ազդակեց՝ «ստախոս, զրպարտիչ»:

Մնացած վկանները յայտնեցին, թէ իրանք ի նկատի ունէին ուրիշ Արեւիին:

Չը նայելով, որ մեղադրանքը անհիմն էր, դատարանը, ինչպէս յայտնի է, մեղադրեց նրան:

ԿԱՆՈՆԱԿՐՈՒԹԻՒՆ

Ոչ որի համար ամենապարզ կասկածի տեղիք չը կայ, որ թիւրքահայերի ազգային սահմանադրութիւնը իրապէս, de facto, վաղուց դադարեցրել է իր գոյութիւնը։ Սակայն որովհետեւ de jure նա գոյութիւն ունի և եւրոպական մեծ պետութիւնները վերջերս նայն իսկ խորհուրդ տուին սուլթանին վերականգնել այդ սահմանադրութիւնը և նրա հիման վրա կատարել նոր պատրիարքի ընտրութիւն, ուստի Պոլսում, Չամիչեան Բարթողիմէոսի խումբը աշխատում է սահմանադրութեան այդ իրաւաբանական գոյութիւնն ևս ջնջել և Կ. Պոլսի ներկայ մահացած վիճակի մէջ սահմանադրութեան վերաքննութեան հարց է յարուցանում։ Եւ ահա ազգադատ քննիչը հետեւեալ յօդուածով, որ ստված է «Փոփոխութիւն» մէջ և թարգմանված ամբողջապէս թիւրք լրագրիւններում, կամենում է հող պատրաստել։

«Ստոր երկրներէ հայ անուն կրող ունեց ընտրեցուցած ծայրերուն ընտ. կարեւորութիւն չը տալով, անտիւն երեւակական յայտերով, խոչոր տուտերով, լեզուանութեամբ, և բարեւերութեան զթարտութեան ու կարեկցութեան դիմախներով մերձեցող մարդիկն վանել հալածելու համար՝ ժամանակէ մը հետէ մեր կաղաքացած յորդորներն՝ նախորդ թերթով յիշելու և դարձեալ յորդորներ կարգադրու պէտք տեսնող արտաւոր և խորին տխրութեամբ։

«Արդ՝ որովհետեւ այդ ծայրերին ու ժողովրդին պարզեալ տեսարանն տակաւին կայ ի մեծ վրնաս մեր սիրելի ազգին, զգուշանալու յորդորներ կուղեմք դարձեալ առ միամիտս, և կը խնդրեմք մեր եկեղեցականներէն, մասնաւոր աղքատացիներէն ու եպիսկոպոսներէն, ժողովրդեան համար օգտին ու բարոյն համար առաջի Աստուծոյ անկեղծ անձնութիւններն ու խոտող եկեղեցականներէն, որ միամիտ ժողովուրդին զգուշութիւն յորդորեն անդադար ու ազգութեան, եկեղեցեաց բեմերէն, յստակ ու բացառապէս ունով և անկեղծ սկուլ։

«Ոչ սակաւ ապշութեամբ լսեցինք թէ ոմանք ժողովրդեան համար այժմ առաւել օգտակար կը համարին պատրիարքարանի կանոնադրութիւնն յիշել, և այդ կանոնով պատրիարքի և կրօնական ու քաղաքական ժողովոց ընտրութեան խնդիր յարուցանել։

«Ոչ, այժմ այդ կանոնը հորհուրդ օգոստապիտ վեհապետին կասկածները փարատելու, և առ ազգէ մեր՝ վաղեմի սէրն ու համակրանքն վերահաստատելու միջոցներն լրջաբար խորհելու, և զօտեւորեալ զօրեւորելու ժամանակն է։ Այդ նպատակաւ կաշխատի արդ պատրիարքական տեղապահ բարձրաշնորհ Տ. Բարթողիմէոս սրբազան, այդ նպատակաւ կաշխատին արդ իր խորհրդակից ժողովականք։ Կաշխատին խաւած միամիտներուն համար գլխութիւն խնդրել և թշուառներն միթիթաբել։ Արեւելիսկոպոսներն ու եպիսկոպոսներն և բովանդակ կղերն, ինչպէս նաև աշխարհականաց աղքեցիկ զանա պարտին անկեղծաբար քննեցին այդ օգոստկար աշխատութեանց կատարելապէս յաջողութեան։

«Չաւանդութեամբ զբաղելու ժամանակ չէ այժմ։ Արդարեւ տաղէի կայսերական պալատան և առաջի Բ. Գրան լոս կը բացատրեն ազգին վիճակն ու պէտքերն թէ տեղապահ սրբազանն և թէ նորին սրբազնութեան խորհրդակից ժողովականք։ Բաւական վստահութիւն կը վայելն, և այդ վստահութեան հորինել անշուշտ կօդի ազգին։ Ոչ պատրիարքարանի կանոնադրութիւնն և ոչ այլ ընտրական կղանակ չեն կրնար՝ արդի աշխատող արարմէն աւելի օգտակար մարմին մը ի գոյ և ի գործ ածել։

«Մեք, այդ կանոնադրութեամբ ընտրեալ ժողովոյ անդամներէն եմք, շատ տարիներէ հետէ զանուած եմք այդ ժողովին մէջ։ Գիտեմք թէ ընտրութիւններն ինչպէս կը կատարուին այդ ժողովոց մէջ, գիտեմք թէ ընտրելոց որոնք օգտակար հանդիսացած են։ Գիտեմք նաև թէ՛ պատրիարք և կրօնական ու քաղաքական ժողովներ ընտրող այդ ժողովոյն անդամոց շատերն ինչպէս կընտրուին և որչափ արժանաւորութիւն և ինչ սիրտ ու ողի կունենան։ Եթէ կանոնադրութեան խօսքն ի վեր հանելու, և կանոնադրութեամբ ընտրութիւններ

կատարելու պատեհ ժամանակն ու առիթը զայ մերձենայ, մեք իբրեւ մին փորձառուաց, պիտի թախանձեմք, պիտի անդեմք որ նախ ազգ կանոնադրութիւնը վերաքննութեան բովէ անցնի ողջախոսն ու փորձառու անձերէ կազմեալ մասնախմբի մը միջոցաւ, բարեխիտի, վաւերանայ նորին կայսերական վեհապետութեան, և ապա ընտրութիւնը կատարուին։ Երբ վերաքննութեան, բարեխիտութեան հրաման ելնէ, պիտի գրեմք այդ կանոնադրութեան բարեխիտելի արամադրութեանց վրա։

«Տ. Բարթողիմէոս սրբազան՝ թէպէտ Պատրիարք տիտղոսը չունի, բայց ունի մեր օգոստապիտ վեհապետին համարումն ու համակրանքն, որ մեծ ինչ է և բաղում օրէնքներ ու ստուար օրինադրեր կարծէ, և որով առաւել քան զՊատրիարք զեր ի վերայ է Տ. Բարթողիմէոս սրբազանը Հորն, խորխորաւ ինչպէ միամիտներն ի վեր հանել կը ձգնի, ազգին կործանեալ յարգն ու վարկն վերականգնել կաշխատի։ Թողունք որ այս մեծ բարիքն գործէ Տ. Բարթողիմէոս սրբազան։ Միթէ խղճի գործ է, միթէ ներքին է ելնել ըսել այս ճգնաժամուն մէջ թէ՛ ի շարժման, ի բացակայութեան կանոնադրութեան կը գործէ, կանոնադրութեամբ ընտրեալ է, միթէ խղճի գործ է բռնել այդ յաջող ձեռքերն և խղճել ազատութեան համար ճգնած պարաններն։

«Ոչ է արժան ի շարժման բարիս գործել։ Ժողովուրդն այժմ կանոնադրութեան պէտք չունի, այլ վերականգն մարդոց շարքի վրան մարդոց եղև, և ոչ մարդ վրան շարժման։ Կանոնադրութիւնն ժողովրդեան համար է, և ոչ ժողովուրդն՝ կանոնադրութեան համար։ Նախ ժողովուրդը, և ապա կանոնադրութիւն, բայց՝ վերաքննելու, բարեխիտելու կանոնադրութիւն։

«Մեր սրբազան հայրերէն կը խնդրեմք որ՝ խղճի ու սրտի մտքը հորհ ընեն միահամուռ յարկ մեր այս բարեկարգութեան խորհրդածութեան։»

ԱՐՄԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Daily Telegraph» լրագրի Բուստամբուլից ատացած վերջին տեղեկութիւններն նայելով, ապտաւոր մատարներէ պարագլուխները վար են դրել իրանց զէնքերը և հնազանդութիւն են յայտնել անգլիական իշխանութեան։ Ընդհանուր ենթադրութիւն է, որ երկրի վերջնական խաղաղացումը չուտով կը կատարուի։

—«Times» լրագրի թղթակիցը հեռագրում է Կանէից (Կրեմէ կղզուց), որ թէ Կրեմէի գնեւաւորահանգապետը բայ թողեց թղթակցի առաջին հեռագիրը, որի մէջ ասված էր քրիստոնեաների գերեզմանատները թիւրքերի ձեռքով պղծվելու մասին, բայց յետոյ այդ հեռագիրը բռնեց և Պալատի գրաքննութիւնը։ Այս օրերս գերեզմանատները քննվեց եւրոպական փութահաւատներին կողմից։ Թիւրքերը վերել են մեծ գերեզմանատան գերեզմանը, որտեղ գերեզմանները, քանդել և խորտակել են արձանները և խաչերը և ոսկրները ցրվել են գերեզմանատանց զուրա։ Գերեզմանատան չրջապատը քանդված է. դրանից յետոյ գերեզմանատունն են թողել տաւալը։ Նորից կատարել են և Մէսկինիի գերեզմանատունը և եկեղեցիներն էլ պղծել են։ Կանէիցում դեռ մնում են 10,000 մահմետականները, թէ և շատերը արդէն վերադարձել են գիւղերը։ Մի քանի մահմետական ազդատուներ աշխատում են պահել նրանց քաղաքում, որպէս զի մի ցոյց սարքեն նոր թէֆթիւնների դէմ։ Բայց թիւրքական իշխանութիւններն էլ ոչինչ չեն անում, որպէս զի ստիպեն նրանց գնալ գիւղերը։

—«Post» լրագիրը հաղորդում է, որ եւրոպական լրագիրների մէջ հրատարակված է հետեւեալ զանադրութեան ընթացիկը, որը իբրեւ թէ ուսումնական և եւրոպական կատալոգութիւնները կնքել են, երբ մարշալ Եւստապոսն եկել էր Ռուսաստան։ «Ռուսաստանը և Եւրոպան որոշել են պահպանել Կորէա երկրի ամբողջութիւնը։ Ռուսաստանը պարտաւորվում է համադրել Կորէական թագաւորին վերադառնալ իր պալատը, անհրաժեշտ դէպքում Ռուսաստանը և Եւրոպան կարող են մտնել իրանց ջորքը Կորէա, բայց հաստատ ընտելութեամբ, նախապէս համաձայնութիւն կայացնելով։ Հեռագիրը Սէուլի և Ֆուջանի մէջտեղ պէտք է մնայ եւրոպական կատալոգութեան ձեռքում։ Ռուսաստանը

տանը և Եւրոպան պարտաւորվում են յետ կենալ որ և է միջամտութիւն գործելուց կօրէալի ներքին գործերում։

—Կ. Պոլսից հեռագրում են. «Լուր է պտտում, որ նախկին վիզիր Գուշուի Սաիդ-փաշա, որը անցեալ տարի անգլիական դեսպանատանն էր ապաստանել, նորից սկսել է վայելել սուլթանի հորհները։ Նա մեծ վիզիր կը նշանակվի։ Այս օրերս նա պալատ կանչվեց և երկար խորհրդակցութիւն ունէր սուլթանի հետ։

—Լոնդոնից հեռագրում են, որ գերմանական վիլհելմ կայսրը և Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ֆոր եկող 1897 թ. ին լոնդոն կը գնան՝ անգլիական վիզիրին թագուհու յօբելեանին ներկայ լինելու համար։

—«НОВОСТИ» լրագրին հեռագրում են Վիէնայից. «Սերաէվում մի մեծ փոթորիկ է եղել, որը սոսկալի աւերումներ է գործել, շատ ծաւեր արմատից պղկել է. ամառները մնացել են առանց ծածկի. եկեղեցիները և մէլիքները կիտաքանդ են եղել. մի ամբողջ գիւղ տարվել թափվել է գետի մէջ։—Ալբանիայում վերանորոգվել են արհաւիրների անկաքուղիները։ Գիւղերում ընդհարումներ են տեղի ունենում։»

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Միւնխենում հրատարակվող «Neueste Nachrichten» լրագիրը պատմում է մի հետաքրքիր միջոցառում, որ տեղի է ունեցել Կիւլում, նորակոչ գիւնտերների երջում՝ տալուց յետոյ։ Վիէնայից կայսրը զիմեց հայրենիքի երիտասարդ պաշտպաններին մի ձառով, որի մէջ յորդորեց նրանց զգուշանալ արտաքին և ներքին թշնամիներից։ Հաւուց յետոյ նա առանձին սկսեց խօսել մի քանի ընկերատների հետ և վերադառնալ, նա մօտեցաւ մի առաջին և բարձրաստի ըստաւարացու։ Կայսրը հարցրեց նրան, որ արդեօք հասկանում է նա, թէ արտաքին թշնամիների անտնով ուսին պէտք է հասկանալ։—«Երաններին, ձերք մեծութիւն։—Իսկ ովքեր և ու ներքին թշնամիները։—«Պրուսացիները, ձերք մեծութիւն։—պատասխանեց առանց երկար մտածելու գերմանական հայրենիքի պաշտպանը։»

Մարտին Չատիկի գուշակութիւնը 1769 թ.ին։ Եվեցարացի Մարտին Չատիկը, որ ձգնում էր Ալեքան լեռներում, 1769 թ.ին, եւրոպական բոլոր տէրութիւնների մասին դաւանալու գուշակութիւններ է արել, որից մենք թարգմանեցինք միայն թիւրքերին վերաբերեալ գուշակութիւնը։ «Ապագայում Եւրոպայում պէտք է տեղի ունենան այնպիսի դէպքեր, որոնց յիշատակներն անգամ կը սարսափեցնին ամենքին։ Երբ խաղաղութիւնը կը վերականգնվի, թիւրքերը կը զրկվեն իրանց ասիական և աֆրիկական հողերից։ Կ. Պոլսը, սուլթանների այդ մայրաքաղաքը, կը վերցվի առանց մի կաթիլ արեւան, այդպէս, մի հին յիսուսական տակ, կը գտնվի մի մարմարեայ թաղ Sophia Imperatrix վերանորոգութեամբ, իսկ դրա տակը մի մեծ արկղ—ի տակեղենները և ակնները։ Ներքին խռովութիւնները, իրաքանցութեանը, անվերջաւոր կը ռիւնենր և սոսի ու մասնաւոր թիւրքական կառավարութիւնը կը մատնեն անդաւնալի անկման և թիւրքերը զրկվելով իրանց եւրոպական հողերից, ստիպված կը լինեն քաշվել Ֆեցան, Մարսիկի և Տունիս։ Գուշակելով միւս տէրութիւնների վիճակը, դարձեալ անցնում է թիւրքերին։ «Իսկ դուք, զօրեղ թիւրքեր, յաւանքան վէշեմբուրգը և ամբողջ Ունգարիան ձեր կամքով կը թողնէք, ամենաշնչին բանը ձեզ կը սարսափեցնի. ձեր կենսքը ամեն մի վայրկեան երկուք մէջ կը լինի. ձեր մզկիթները, ձեր Ղուրանը բոլորովին կուշանան։ Այսպիսով անհաստաները բոլորովին կուշանան, և Ասիայում խաւարից յետոյ կը փայլի հիմարտութեան լոյսը. անհաստաների բոլոր երկրները կառնեն քրիստոնեաների։ Եւրոպայում կը գտնվեն ստորերկրեայ շատ գանձեր։ Բայց թիւրքերը իրանց անկուսից առաջ սարսափելի կատաղութեան մէջ կընկնեն. նրանք զուլու կը բարձրացնեն ջնջելու բոլոր քրիստոնեաներին, բայց այդ երկար չի տևի և փրկիչը կուղարկի դրանց իրանց արժանի պատմիչներ և այդպիսով բոլորովին կուշանան նրանք։» Երբ եւրոպական զիւղովմանների որոտեղոտութեամբ ձառնել և բաղձալի գեղեցիկ ծրագիրները քանդու պէս են անցնում, մնում է խեղճ թիւրքահայերին անձնատուր լինել գուշակութիւններից։

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ. 16 հոկտեմբերի։ Լրագիրներում սխալ լուր էր տրված, թէ դատարանում չուտով կը քննվի ուսուցիչ առեւտրա-արդիւնաբերական ընկերի սնանկութեան վերաբերեալ գործը։ Դա ճիշդ չէ. խօսքը ուսուցիչ առեւտրական և կօմիսիոնական ընկերի մասին է։ ԿԻԵՎ. 16 հոկտեմբերի։ Հոկտեմբերի 15-ին, զիշերը, արվեց Կապիկի տան կից գանդոլ գաւիթը։ Նրա մէջ ապրող Եակովչիկան և Օղի-

նարիկովա ըսյրերը հինգ երեխաներով կրակի զոհ գնացին։

ՄՕՍԿՎԱ. 16 հոկտեմբերի։ Նահանգական դատարանում սխալեց Պետեր Խոնովիչ Գուբոնինի անունով գրված կեղծ մարհաների գործը։

ՉԷԼԻՖԻՆՍԿ. 16 հոկտեմբերի։ Արեւմտեան-սիբիրեան երկաթուղու կառուցումը Չէլիպինսկից մինչև Օբ գետը, 1329 վերստ տարածութեան վրա, աւարտված է։ Հոկտեմբերի 15-ին սկսված է ապրանքատար և մարդատար գնացքների կանոնաւոր երթևեկութիւն։

ԴԱՐՄԵՏՍ. 16 հոկտեմբերի։ Հոկտեմբերի 15-ին Կորոլեւան դուքսը դնաց Լոնդոն։

ՎԻԵՆԱ. 16 հոկտեմբերի։ Հաղորդում են անկաբաւթիւնների մասին ընտրութիւնների ժամանակ Տիրանում (Ունգարիա)։ Հուսարների մի զօրաբանով լրա սկսեցին ըստի կարկուտ թափել. մի հուսար սպանվեց։ Չիրտերից ջըրվեցին ամբողջ սրբերով։ Ալմալի ընտրողական շարժման պատճառով Ունգարիայում, զօրքեր են ուղարկված Նէլկիրսէն, Տրայսկիր-սէն, Մարմուրգ, Կադէնֆուր և Լայպալ։

ՊԱՐԻԶ. 17 հոկտեմբերի։ Մեծ Իշխան վաղի-միւր Ալեքսանդրովիչ հոկտեմբերի 16-ին, այցելութիւն ձորեց նախագահ Ֆորին Նիւսան պալատում։ Նորին Բարձրութեանը վերնորական պատիւներ տրվեցին։

ՎԻԵՆԱ. 17 հոկտեմբերի։ Չէլիպինսկի կողմը, 30 ձայների մեծամասնութեամբ 3-ի դէմ, յայտարարեց, որ պատգամաւոր վայսպի այլ ևս չէ համարվում կուսակցութեան անդամ։ Սոք վը-ճիւր պատճառաբանված է վաղաժամ փարմաւորներով, որոնք ուղղված էին կուսի դէմ։

ԲՈՒԴԱ-ՊԵՏ. 17 հոկտեմբերի։ Հոկտեմբերի 16-ին սկսվեցին պատգամաւորների ժողովի ընտրութիւնները։ Յայտն են 38 չրջանների ընտրութիւնների հետեւեղները։ Ընտրված են՝ 34 ազատամիտներ, 2 անդամներ՝ ազգային կուսակցութեան, 1 անդամ՝ արարիանների, և 1 անձն, որ չէ պատկանում ոչ մէկ կուսակցութեան։ Ոչինչ անկաբաւթիւնների տեղի չունեցան։

ԲԷԼԳՐԱՎ. 17 հոկտեմբերի։ Հոկտեմբերի 16-ին թագաւոր Ճանապարհ ընկալ Բուսինիա կար թագաւորին այցելելու համար։ Թագաւորը կիրակի օր կը վերադառնայ Բէլգրադ։ Յանկովի բարեկամայում Ստամբուլի կուսակցութեան հետ անկեղծ ուստաների դարմանքն է յարուցանում և հերձուած կառաջացին նրա կուսակցիները մէջ։

ՍԻՄԼԱ. 17 հոկտեմբերի։ Սովի վստաղը ըստպաւնայի ձև է ընդունում։ Մահաւանական է, որ այժմ անձրներն սկսվին։ Պէնջարի հիսուսարեւմտեան և միջին նահանգներում դրովիւնը ծանրանում է։ Հացի պակասութիւնը զգացվում է մինչև Բոմբէյ։ Գները շատ բարձրացել են։ Ըստպաւնում է, որ հացը մեծ քանակութեամբ կը ներմուծվի։ Սկսված են աշխատանքներ սովը թեթեւացնելու համար։

ԴԱՐՄԵՏՍ. 17 հոկտեմբերի։ Կայսրը Կայսրուհին, Մեծ Իշխանուհի Օլգա Նիկոլաւնա, Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչ և Մեծ Իշխանուհի Նիկոլաւնա Ֆեոդորովնա արտաքաղաքապետ Ճանապարհ ընկալ Կարմաշտով։ Հետսենի մեծ դուքսը և մեծ դուքսին ճանապարհ գցեցին Նոցա Մեծսկիւններին մինչև Կայսրան, որտեղ գտնվում էին քաղաքացիական և զինուորական իշխանութիւններ։ Կայսրը հետեւեան դրագանների զգեստով էր։ Կայսրանում կայսրը ընդունեց օֆիցիւրներին, որոնք նորված էին ուսու չքանչաներ։ Նոցա Մեծսկիւնները որդարածաբար հրաժեշտ տուին ներկայ եղողներին։

ԽՐԱԳԻՐ՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՆ՝ ԱՆԻԿԷԱՍ ԱՐՄՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տ Ե Ղ Ե Կ Ց Ո Յ Ց				ԵՐԿԱՌՈՒԴԻ			
Բաժ. գուր. և զալի	9 ժ. 40 ր. առ.	11 ժ. 20 ր. գըշ.	Թիֆլիս հասնում է	9 ,, 55 ,, Եր.	12 ,, 25 ,, ցեր.	Թիֆլ. գուր. և զալի	10 ,, 50 ,, ,,
Բաժ. գուր. և զալի	4 ,, 49 ,, ,,	7 ,, 30 ,, առ.	Բաղուց գուր. և զալի	2 ժ. 10 ր. ցեր.	11 ժ. 5 ր. գըշ.	Թիֆլիս հասնում է	8 ,, 32 ,, առ.
Թիֆլ. գուր. և զալի	9 ,, 30 ,, ,,	6 ,, 50 ,, ,,	Թիֆլ. գուր. և զալի	9 ժ. 30 ր. առ.	7 ժ. 1 ր. Եր.	Վլադիկաւկազ հասնում է	12 ,, — ցեր.

Գ Ի Լ Ի Ժ Ա Ն Ս Ն Ե Ր			
Հինգ. Հոգ. և Համ. 7 ժ. առ.	9 ժամ. առ.	Թիֆլիս և զալի	Միտում
Վլադիկաւկազ հասնում է	6 ժ. Եր.	8 ժ. Եր.	Վլադ. Հոգ. և Համ. (Հինգ. գըշ.)
Թիֆլ. գուր. և զալի	9 ժ. 30 ր. առ.	7 ժ. 1 ր. Եր.	Վլադիկաւկազ հասնում է

ԲԺԻՇԿ ԶԱՐԳԱՐԱՆՑ

Մօտկալի կայսերական համալսարանի մասնկարուժական կլինիկայի նախկին օրդինատոր, ընդունում է միայն հիւանդ երեխաներին ամեն օր, ժամի 11 1/2—1 ր. Զարաթ օրերը՝ ձրի։ Հաւցէլ՝ Ստարո-Սիւսիտուսկայա, ա. № 13. № 103 (ձր.) 12—40

Մ. ՄՈՐԻՍԱՆԴ չուտով կը վերադառնայ Թիֆլիս և կը տայ անգլիերէն լեզուի դասեր։ Յանկաղդները իրանց հաւցէլ կարող են թողնել Բ. Մարտիրոսեանցէ մօտ։ (№ 120) 3—3

Типографія Канцел. Главнаоч. Гражданск. частью на Кавказѣ, Лорист-Меликовская ул., д. кан.